**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ**
**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**N ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/2-2**

ք. Երևան «21» հունվար 2020թ.

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամը, ի դեմս ռեկտոր Ռ.Զ.Մարուխյանի, որը գործում է համալսարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և Ֆոտոն ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ն.Պետրոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 2 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 2 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 4.564.485 (չորս միլիոն հինգ հարյուր վաթսունչորս հազար չորս հարյուր ութսունհինգ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները

կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է __13__ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| **ԳՆՈՐԴ** | **ՎԱՃԱՌՈՂ** |
| --- | --- |
| Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամ | **ՖՈՏՈՆ ՍՊԸ** |
| Հասցեն՝ ք. Երևան, Տերյան 105 | Հասցեն՝ Ք. Երևան,Ռուստոմի 58, |
| Բանկը՝ «Այ Դի բանկ» ՓԲԸ | Բանկը՝ <<ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ>> ՓԲԸ |
| Հ/Հ 11800109943100 | Հ/Հ 16044050085000 |
| ՀՎՀՀ 01504054 | ՀՎՀՀ 90036001 |
| Ռեկտոր------------------------ Ռ.Մարուխյան | Տնօրեն ------------------------ Ն. Պետրոսյան |
| (ստորագրություն) Կ.Տ | (ստորագրություն) Կ.Տ |

*Հավելված N 1*
*«21» հունվար 2020թ. կնքված*
*N ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/2-2 ծածկագրով պայմանագրի*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը** | արտադրողի անվանումը և ծագման երկիրը** | տեխնիկական բնութագիրը | Չափման միավոր | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | քանակը | մատակարարման | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը |
| 8 | 15111200 | հորթի միս Գյուղմթերք | ՀՀ Գյուղմթերք | Թարմ՝ ստացված սպանդանոցային մորթից անմիջապես հետո (պահպանության ժամկետը 6d-ից ոչ ավել), երիտասարդ սպանդային կենդանու միս, բաց գույնի, արյունազրկված, ոսկրազերծված փափուկ միս, սանիտարահիգիենիկ նորմերին համապատասխան, մաքուր, առանց կողմնակի հոտերի ԳՕՍՏ 779-55: Անվտանգությունը և մակնշումը՝ ՄՄ ՏԿ 021/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին», ՄՄ ՏԿ 022/2011 «Սննդամթերքի մակնշման մասին»,, ՄՄ ՏԿ 034/2013 «Մսի և մսամթերքի անվտանգության մասին» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի **Մատակարարումը հունվարից՝ շաբաթը մեկ անգամ** | կգ. | 3,524.00 | 2,872,060 | 815 | ք. Երևան, Տերյան 105 | 815 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020թվականի դեկտեմբերի 30-ը |
| 16 | 03221113 | Լոբի Գյուղմթերք | ՀՀ Գյուղմթերք | *հատիկավոր Գորիս, Կարմիր լոբի, միագույն կամ գունավոր ցայտուն, չոր՝ խոնավությունը 15%-ից ոչ ավելի կամ միջին չորությամբ՝ 15,1- 18,0 %, պիտանելիության մնացորդային ժամկետը ոչ պակաս 50%, ծագման երկիրը Հայաստան, ԳՕՍՏ 7758-75: Անվտանգությունը և մակնշումը՝ ՄՄ ՏԿ 021/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին», ՄՄ ՏԿ 022/2011 «Սննդամթերքի մակնշման մասին», ՄՄ ՏԿ 015/2011 «Հացահատիկի անվտանգության մասին» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի* ***Մատակարարումը հունվարից-հունիս, սեպտեմբերից-դեկտեմբեր՝ ամիսը մեկ անգամ*** | կգ. | 2,000.00 | 168,000 | 84 | ք. Երևան, Տերյան 105 | 84 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020թվականի դեկտեմբերի 30-ը |
| 17 | 03221117 | Ոլոռ Նիկո | ՌԴ Նիկո ՍՊԸ | Բարձր որակի, չորացրած, կեղևած, դեղին կամ կանաչ գույնի, ԳՕՍՏ 16730-71: Անվտանգությունը և մակնշումը՝ ՄՄ ՏԿ 021/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին», ՄՄ ՏԿ 022/2011 «Սննդամթերքի մակնշման մասին», ՄՄ ՏԿ 015/2011 «Հացահատիկի անվտանգության մասին» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի **Մատակարարումը հունվարից-հունիս, սեպտեմբերից-դեկտեմբեր՝ ամիսը մեկ անգամ** | կգ. | 247.00 | 19,019 | 77 | ք. Երևան, Տերյան 105 | 77 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020թվականի դեկտեմբերի 30-ը |
| 22 | 15617000 | Ցորենաձավար Գ. Մանասերյան | ՀՀ Ֆ/Ա Գ. Մանասերյան | Ստացված ցորենի թեփահան հատիկների հղկմամբ, կամ հետագա կոտրատմամբ, ցորենի հատիկները լինում են հղկված ծայրերով կամ հղկված կլոր հատիկների ձևով, խոնավությունը 14%-ից ոչ ավելի, աղբային խառնուկները 0,3%-ից ոչ ավելի, պատրաստված բարձր և առաջին տեսակի ցորենից, ԳՕՍՏ 276-60: Անվտանգությունը և մակնշումը՝ ՄՄ ՏԿ 021/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին», ՄՄ ՏԿ 022/2011 «Սննդամթերքի մակնշման մասին», ՄՄ ՏԿ 015/2011 «Հացահատիկի անվտանգության մասին», ՄՄ ՏԿ 005/2011 «Փաթեթվածքի անվտանգության մասին», և և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի **Մատակարարումը հունվարից-հունիս, սեպտեմբերից-դեկտեմբեր՝ ամիսը մեկ անգամ** | կգ. | 234.00 | 13,572 | 58 | ք. Երևան, Տերյան 105 | 58 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020թվականի դեկտեմբերի 30-ը |
| 23 | 15619000 | Հաճարաձավար Հարութ Մնացականյան | ՀՀ ՖԱ Հարութ Մնացականյան | Ստացված հաճարի հատիկներից, հատիկներով, խոնավությունը 15 %-ից ոչ ավելի, փաթեթավորումը՝ տոպրակներով կամ պարկերով, ծագման երկիր Հայաստան: Անվտանգությունը և մակնշումը՝ ՄՄ ՏԿ 021/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին», ՄՄ ՏԿ 022/2011 «Սննդամթերքի մակնշման մասին», ՄՄ ՏԿ 015/2011 «Հացահատիկի անվտանգության | կգ. | 344.00 | 9,976 | 29 | ք. Երևան, Տերյան 105 | 29 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020թվականի դեկտեմբերի 30-ը |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | մասին» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի<br>**Մատակարարումը հունվարից-հունիս, սեպտեմբերից-դեկտեմբեր՝ ամիսը մեկ անգամ** | | | | | | | |
| 24 | 15617000 | ցորենաձավար՝ Գարեձավար Գ. Մանասերյան | ՀՀ Ֆ/Ա Գ. Մանասերյան | Ստացված գարուց թեփահան հատիկների հղկմամբ կամ հետագա կոտրատմամբ, գարու հատիկները լինում են հղկված ծայրերով կամ հղկված կլոր հատիկների ձևով, խոնավությունը 15 % աղբային խառնուկները 0,3 %-ից ոչ ավելի, ԳՕՍՏ 5784-60: Անվտանգությունը և մակնշումը՝ ՄՄ ՏԿ 021/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին», ՄՄ ՏԿ 022/2011 «Սննդամթերքի մակնշման մասին», ՄՄ ՏԿ 015/2011 «Հացահատիկի անվտանգության մասին» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի<br>**Մատակարարումը հունվարից-հուլիս, սեպտեմբերից-դեկտեմբեր՝ ամիսը մեկ անգամ** | կգ. | 350.00 | 19,950 | 57 | ք. Երևան, Տերյան 105 | 57 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020թվականի դեկտեմբերի 30-ը |
| 27 | 15613350 | վարսակի փաթիլներ Պրիմա | ՌԴ Պրիմա ՓԲԸ | Ռուսական արտադրության, թարմ, մաքուր,չոր,սպիտակ գույնի, խոնավությունը %, առանց կողմնակի ավելացված համերի և կողմնակի հոտերի թթվայնությունը ոչ ավելի 5.0, ԳՕՍՏ201149-83: Անվտանգությունը և մակնշումը՝ ՄՄ ՏԿ 021/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին», ՄՄ ՏԿ 022/2011 «Սննդամթերքի մակնշման մասին» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի<br>**Մատակարարումը հունվարից-հունիս, սեպտեմբերից-դեկտեմբեր՝ շաբաթը մեկ անգամ** | կգ. | 325.00 | 25,350 | 78 | ք. Երևան, Տերյան 105 | 78 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020թվականի դեկտեմբերի 30-ը |
| 28 | 15871257 | համեմունքներ՝ Կարմիր պղպեղ աղացած Գյուղմթերք | ՀՀ Գյուղմթերք | Համեմունք աղացած, խոնավությունը՝ 12%-ից ոչ ավելի, եթերային յուղերը՝ 0,8%-ից ոչ պակաս, մոխրի առկայությունը՝ 5-6%, չափածրարված պոլիէթիլենային, թղթե կամ ստվարաթղթե տուփակներում, ԳՕՍՏ 29053-91: Անվտանգությունը և մակնշումը՝ ՄՄ ՏԿ 021/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին», ՄՄ ՏԿ 022/2011 «Սննդամթերքի մակնշման մասին» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի<br>**Մատակարարումը փետրվար, ապրիլ, հունիս, սեպտեմբեր, նոյեմբեր ամիսներին՝ ամիսը մեկ անգամ** | կգ. | 1,535.00 | 7,675 | 5 | ք. Երևան, Տերյան 105 | 5 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020թվականի դեկտեմբերի 30-ը |
| 32 | 15331161 | սոխ, գլուխ 1 Գյուղմթերք | ՀՀ Գյուղմթերք | *Թարմ, կծու, կիսակծու կամ քաղցր, սովորական տեսակի, նեղ մասի տրամագիծը 3սմ-ից ոչ պակաս, առողջ, մաքուր, ԳՕՍՏ 27166-86: Անվտանգությունը և մակնշումը՝ ՄՄ ՏԿ 021/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին», ՄՄ ՏԿ 022/2011 «Սննդամթերքի մակնշման մասին» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի*<br>***Մատակարարումը հունվարից՝ շաբաթը մեկ անգամ*** | կգ. | 300.00 | 117,000 | 390 | ք. Երևան, Տերյան 105 | 390 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020թվականի դեկտեմբերի 30-ը |
| 34 | 03221100 | բազուկ 1 Գյուղմթերք | ՀՀ Գյուղմթերք | *Արտաքին տեսքը՝ արմատապտուղները թարմ, ամբողջական, առանց հիվանդությունների, չոր, չկեղտոտված, առանց ճաքերի և վնասվածքների: Ներքին կառուցվածքը՝ միջուկը հյութալի, մուգ կարմիր՝ տարբեր երանգների. Արմատապտուղների չափսերը (ամենամեծ լայնակի տրամագծով) 5-14սմ. Թույլատրվում է շեղումներ նշված չափսերից և մեխանիկական վնասվածքներով 3 մմ ավել խորությամբ՝ ընդհանուր քանակի 5%-ից ոչ ավելի. Արմատապտուղներին կպած հողի քանակությունը ոչ ավել քան ընդհանուր քանակի 1%, ԳՕՍՏ 26766-85 : Անվտանգությունը և մակնշումը՝ ՄՄ ՏԿ 021/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին», ՄՄ ՏԿ 022/2011 «Սննդամթերքի մակնշման մասին» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի*<br>***Մատակարարումը հունվարից՝ շաբաթը մեկ անգամ*** | կգ. | 300.00 | 76,500 | 255 | ք. Երևան, Տերյան 105 | 255 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020թվականի դեկտեմբերի 30-ը |
| 35 | 03221110 | գազար 2 Գյուղմթերք | ՀՀ Գյուղմթերք | Սովորական տեսակի, ԳՕՍՏ 26767-85: Անվտանգությունը և մակնշումը՝ ՄՄ ՏԿ 021/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին», ՄՄ ՏԿ 022/2011 «Սննդամթերքի մակնշման մասին» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի<br>**Մատակարարումը հունվարից՝ շաբաթը մեկ անգամ** | կգ. | 206.00 | 61,388 | 298 | ք. Երևան, Տերյան 105 | 298 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020թվականի դեկտեմբերի 30-ը |
| 36 | 03222128 | Խնձոր Գյուղմթերք | ՀՀ Գյուղմթերք | *Խնձոր թարմ, պտղաբանական I խմբի, Հայաստանի տարբեր տեսակների, նեղ տրամագիծը 5 սմ-ից ոչ պակաս, ԳՕՍՏ 2112275: Անվտանգությունը և մակնշումը՝ ՄՄ ՏԿ 021/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին», ՄՄ ՏԿ 022/2011 «Սննդամթերքի մակնշման մասին» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի*<br>***Մատակարարումը հունվարից-հուլիս, սեպտեմբերից-դեկտեմբեր՝*** | կգ. | 350.00 | 420,000 | 1200 | ք. Երևան, Տերյան 105 | 1200 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020թվականի դեկտեմբերի 30-ը |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ***շաբաթը մեկ անգամ*** | | | | | | |
| 45 | 15841100 | Կակաո Ջալան Տանջունգ | Մալազիա Ջալան Տանջունգ | *Խոնավությունը՝ 6,0 %-ից ոչ ավել, pH-ը՝ 7,1-ից ոչ ավելի, դիսպերսությունը՝ 90,0 %-ից ոչ պակաս, առանց կողմնակի հոտերի և համերի, փաթեթավորված թղթե տուփերում կամ ապակյա տարաներում, ԳՕՍՏ 108-76: Անվտանգությունը և մակնշումը՝ ՄՄ ՏԿ 021/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին», ՄՄ ՏԿ 022/2011 «Սննդամթերքի մակնշման մասին» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի, Գրանդ Քենդի կամ համարժեք*<br>***Մատակարարումը փետրվար, ապրիլ, հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր ամիսներին՝ ամիսը մեկ անգամ*** | կգ. | 4,000.00 | 18,000 | 4.5 | ք. Երևան, Տերյան 105 | 4.5 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020թվականի դեկտեմբերի 30-ը |
| 46 | 15332410 | Չիր Էդգար-Վալդ | ՀՀ Էդգար-Վալդ ՍՊԸ | " Կեղևից մաքրած,մաքուր, առանց կորիզի,վերամշակված,փափուկ,առանց շաքարի,ծծումբի,առանց շաքարի օշարակի, բաց գույնի , ոչ վնասված, առանց կողմնակի հոտերի, ԳՕՍՏ 32896-2014: Անվտանգությունը և մակնշումը՝ ՄՄ ՏԿ 021/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին», ՄՄ ՏԿ 022/2011 «Սննդամթերքի մակնշման մասին» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի<br>**Մատակարարումը հունվարից-հունիս, նոյեմբեր, դեկտեմբեր ամիսներին՝ շաբաթը մեկ անգամ** | կգ | 1,544.00 | 154,400 | 100 | ք. Երևան, Տերյան 105 | 100 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020թվականի դեկտեմբերի 30-ը |
| 48 | 03221126 | Հազար Գյուղմթերք | ՀՀ Գյուղմթերք | Թարմ, առանց վնասվածքների, մաքուր վիճակում: Անվտանգությունը և մակնշումը՝ ՄՄ ՏԿ 021/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին», ՄՄ ՏԿ 022/2011 «Սննդամթերքի մակնշման մասին» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի<br>**Մատակարարումը մարտից-հուլիս, սեպտեմբերից-դեկտեմբեր՝ շաբաթը մեկ անգամ** | կգ. | 1,500.00 | 111,000 | 74 | ք. Երևան, Տերյան 105 | 74 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020թվականի դեկտեմբերի 30-ը |
| 49 | 03221124 | Վարունգ Գյուղմթերք | ՀՀ Գյուղմթերք | Թարմ, առանց վնասվածքների, մաքուր,առանց արտաքին ավելորդ խոնավության, ԳՕՍՏ 33932-2016: Անվտանգությունը և մակնշումը՝ ՄՄ ՏԿ 021/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին», ՄՄ ՏԿ 022/2011 «Սննդամթերքի մակնշման մասին» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի<br>**Մատակարարումը հունիսից- հոկտեմբեր, դեկտեմբեր ամիսներին՝ շաբաթը մեկ անգամ** | կգ. | 234.00 | 52,650 | 225 | ք. Երևան, Տերյան 105 | 225 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020թվականի դեկտեմբերի 30-ը |
| 51 | 15872600 | Կերակրի սոդա ԿարիՏար | ՌԴ ԿարիՏար ՍՊԸ | Սոդա սննդային, սպիտակ, առանց ավելորդ հոտերի, չափածրարված 500 գր թղթե տարաներում, արտադրող երկիր Ռուսաստան, համապատասխան գործող նորմերի և ստանդարտների (ԳՕՍՏ 2156-76): Անվտանգությունը և մակնշումը՝ ՄՄ ՏԿ 021/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին», ՄՄ ՏԿ 022/2011 «Սննդամթերքի մակնշման մասին» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի<br>**Մատակարարումը հունվարից-հունիս, սեպտեմբերից-դեկտեմբեր՝ ամիսը մեկ անգամ** | կգ. | 500.00 | 2,500 | 5 | ք. Երևան, Տերյան 105 | 5 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020թվականի դեկտեմբերի 30-ը |
| 54 | 15871256 | պղպեղ՝ կանաչ Գյուղմթերք | ՀՀ Գյուղմթերք | Թարմ, քաղցր, առողջ, առանց վնասվածքների, առանց արտաքին ավելորդ խոնավության, ԳՕՍՏ 34325-2017: Անվտանգությունը և մակնշումը՝ ՄՄ ՏԿ 021/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին», ՄՄ ՏԿ 022/2011 «Սննդամթերքի մակնշման մասին» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի<br>**Մատակարարումը հունիսից-նոյեմբեր՝ շաբաթը մեկ անգամ** | կգ. | 238.00 | 30,940 | 130 | ք. Երևան, Տերյան 105 | 130 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020թվականի դեկտեմբերի 30-ը |
| 55 | 15831500 | շաքարի արտադրության մնացորդներ՝ Շաքարի փոշի Ազգա Լոգիստիկս | ՀՀ Ազգա Լոգիստիկս ՍՊԸ | Սպիտակ, մաքուր, ամանյն ԳՕՍՏ-ի, Անվտանգությունը և մակնշումը՝ ՄՄ ՏԿ 021/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին», ՄՄ ՏԿ 022/2011 «Սննդամթերքի մակնշման մասին» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի<br>**Մատակարարումը հունվար, մայիս, սեպտեմբեր, դեկտեմբեր ամիսներին՝ ամիսը մեկ անգամ** | կգ. | 1,000.00 | 2,000 | 2 | ք. Երևան, Տերյան 105 | 2 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020թվականի դեկտեմբերի 30-ը |
| 56 | 03221115 | կանաչ լոբի Գյուղմթերք | ՀՀ Գյուղմթերք | *Թարմ, առողջ, առանց վնասվածքների, մաքուր, ԳՕՍՏ 34299-2017: Անվտանգությունը և մակնշումը՝ ՄՄ ՏԿ 021/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին», ՄՄ ՏԿ 022/2011 «Սննդամթերքի մակնշման մասին» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի*<br>***Մատակարարումը հունիս, հուլիս, սեպտեմբեր, հոկտեմբեր ամիսներին՝ շաբաթը մեկ անգամ*** | կգ. | 500.00 | 72,500 | 145 | ք. Երևան, Տերյան 105 | 145 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020թվականի դեկտեմբերի 30-ը |
| 58 | 03221122 | Դդմիկներ | ՀՀ Գյուղմթերք | Թարմ, առողջ, առանց վնասվածքների, մաքուր, ԳՕՍՏ 31822-2012: | կգ. | 124.00 | 6,200 | 50 | ք. Երևան, | 50 | Պայմանագիրն ուժի |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Գյուղմթերք | | Անվտանգությունը և մակնշումը՝ ՄՄ ՏԿ 021/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին», ՄՄ ՏԿ 022/2011 «Սննդամթերքի մակնշման մասին» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի **Մատակարարումը հունիս, հուլիս, օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր ամիսներին՝ շաբաթը մեկ անգամ** | | | | | Տերյան 105 | | մեջ մտնելու օրվանից մինչև 2020թվականի դեկտեմբերի 30-ը |
| 59 | 03222113 | Չամիչ Գյուղմթերք | ՀՀ Գյուղմթերք | Մաքուր, դեղին գույնի, պատրաստված սպիտակ խաղողից, ԳՕՍՏ 6882-88: Անվտանգությունը և մակնշումը՝ ՄՄ ՏԿ 021/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին», ՄՄ ՏԿ 022/2011 «Սննդամթերքի մակնշման մասին» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի **Մատակարարումը փետրվար-հունիս, սեպտեմբեր- դեկտեմբեր ամիսներին՝ ամիսը մեկ անգամ** | կգ. | 1,375.00 | 48,125 | 35 | ք. Երևան, Տերյան 105 | 35 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020թվականի դեկտեմբերի 30-ը |
| 60 | 03222129 | Տանձ Գյուղմթերք | ՀՀ Գյուղմթերք | *Թարմ, առողջ, առանց վնասվածքների, մաքուր, ԳՕՍՏ 33499-2015: Անվտանգությունը և մակնշումը՝ ՄՄ ՏԿ 021/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին», ՄՄ ՏԿ 022/2011 «Սննդամթերքի մակնշման մասին» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի* ***Մատակարարումը սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին՝ շաբաթը մեկ անգամ*** | կգ. | 700.00 | 66,500 | 95 | ք. Երևան, Տերյան 105 | 95 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020թվականի դեկտեմբերի 30-ը |
| 61 | 03222134 | Սալոր Գյուղմթերք | ՀՀ Գյուղմթերք | *Թարմ, առողջ, առանց վնասվածքների, մաքուր, ԳՕՍՏ 32286-2013: Անվտանգությունը և մակնշումը՝ ՄՄ ՏԿ 021/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին», ՄՄ ՏԿ 022/2011 «Սննդամթերքի մակնշման մասին» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի* ***Մատակարարումը օգոստոս-հոկտեմբեր ամիսներին՝ շաբաթը մեկ անգամ*** | կգ. | 400.00 | 56,000 | 140 | ք. Երևան, Տերյան 105 | 140 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020թվականի դեկտեմբերի 30-ը |
| 66 | 03222132 | Դեղձ Գյուղմթերք | ՀՀ Գյուղմթերք | Թարմ, առողջ, առանց վնասվածքների, մաքուր, ԳՕՍՏ 34340-2017: Անվտանգությունը և մակնշումը՝ ՄՄ ՏԿ 021/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին», ՄՄ ՏԿ 022/2011 «Սննդամթերքի մակնշման մասին» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի **Մատակարարումը օգոստոս-հոկտեմբեր ամիսներին ՝ շաբաթը մեկ անգամ** | կգ | 294.00 | 49,980 | 170 | ք. Երևան, Տերյան 105 | 170 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020թվականի դեկտեմբերի 30-ը |
| 67 | 03222118 | Կիտրոն Գյուղմթերք | Վրաստան Գյուղմթերք | *Թարմ ,առանց վնասվածքների, միջին չափի,ԳՕՍՏ 4429-82 2006 : Անվտանգությունը և մակնշումը՝ ՄՄ ՏԿ 021/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին», ՄՄ ՏԿ 022/2011 «Սննդամթերքի մակնշման մասին» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի* ***Մատակարարումը հունվար-ապրիլ, հոկտեմբերից-դեկտեմբեր՝ շաբաթը մեկ անգամ*** | կգ. | 1,300.00 | 83,200 | 64 | ք. Երևան, Տերյան 105 | 64 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020թվականի դեկտեմբերի 30-ը |

**ԳՆՈՐԴ**

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամ

Հասցեն՝ ք. Երևան, Տերյան 105

Բանկը՝ «Այ Դի բանկ» ՓԲԸ

Հ/Հ 11800109943100

ՀՎՀՀ 01504054

Ռեկտոր------------------- Ռ.Մարուխյան

(ստորագրություն) Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

**ՖՈՏՈՆ ՍՊԸ**

Հասցեն՝ Ք. Երևան,Ռոստոմի 58,

Բանկը՝ <<ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ>> ՓԲԸ

Հ/Հ 16044050085000

ՀՎՀՀ 90036001

Տնօրեն ------------------- Ն. Պետրոսյան

(ստորագրություն) Կ.Տ

Հավելված N 2
«21» հունվար 2020թ. կնքված
N ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/2-5 ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Ապրանքի |  |  |  |  |  |  |  |  |  |  |  |  |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
|  |  |  | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** |  |  |  |  |  |  |  |  |  |  |  |  |
|  |  |  | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 8 | 15111200 | հորթի միս Գյումրեթրը | 2,872,060 | 2,872,060 | 2,872,060 | 2,872,060 | 2,872,060 | 2,872,060 | 2,872,060 | 2,872,060 | 2,872,060 | 2,872,060 | 2,872,060 | 2,872,060 | 2,872,060 |
| 16 | 03221113 | Լոբի Գյումրեթրը | 168,000 | 168,000 | 168,000 | 168,000 | 168,000 | 168,000 | 168,000 | 168,000 | 168,000 | 168,000 | 168,000 | 168,000 | 168,000 |
| 17 | 03221117 | Ոլոռ Նիկո | 19,019 | 19,019 | 19,019 | 19,019 | 19,019 | 19,019 | 19,019 | 19,019 | 19,019 | 19,019 | 19,019 | 19,019 | 19,019 |
| 22 | 15617000 | Ցորենածավար Գ. Մանասերյան | 13,572 | 13,572 | 13,572 | 13,572 | 13,572 | 13,572 | 13,572 | 13,572 | 13,572 | 13,572 | 13,572 | 13,572 | 13,572 |
| 23 | 15619000 | Հաճարածավար Հարութ Մնացականյան | 9,976 | 9,976 | 9,976 | 9,976 | 9,976 | 9,976 | 9,976 | 9,976 | 9,976 | 9,976 | 9,976 | 9,976 | 9,976 |
| 24 | 15617000 | ցորենաձավար՝ Գարեձավար Գ. Մանասերյան | 19,950 | 19,950 | 19,950 | 19,950 | 19,950 | 19,950 | 19,950 | 19,950 | 19,950 | 19,950 | 19,950 | 19,950 | 19,950 |
| 27 | 15613350 | վարսակի փաթիլներ Պրիմա | 25,350 | 25,350 | 25,350 | 25,350 | 25,350 | 25,350 | 25,350 | 25,350 | 25,350 | 25,350 | 25,350 | 25,350 | 25,350 |
| 28 | 15871257 | համեմունքներ՝ Կարմիր պղպեղ աղացած Գյումրեթրը | 7,675 | 7,675 | 7,675 | 7,675 | 7,675 | 7,675 | 7,675 | 7,675 | 7,675 | 7,675 | 7,675 | 7,675 | 7,675 |
| 32 | 15331161 | սոխ, գլուխ 1 Գյումրեթրը | 117,000 | 117,000 | 117,000 | 117,000 | 117,000 | 117,000 | 117,000 | 117,000 | 117,000 | 117,000 | 117,000 | 117,000 | 117,000 |
| 34 | 03221100 | բազուկ 1 Գյումրեթրը | 76,500 | 76,500 | 76,500 | 76,500 | 76,500 | 76,500 | 76,500 | 76,500 | 76,500 | 76,500 | 76,500 | 76,500 | 76,500 |
| 35 | 03221110 | գազար 2 Գյումրեթրը | 61,388 | 61,388 | 61,388 | 61,388 | 61,388 | 61,388 | 61,388 | 61,388 | 61,388 | 61,388 | 61,388 | 61,388 | 61,388 |
| 36 | 03222128 | Խնձոր Գյումրեթրը | 420,000 | 420,000 | 420,000 | 420,000 | 420,000 | 420,000 | 420,000 | 420,000 | 420,000 | 420,000 | 420,000 | 420,000 | 420,000 |
| 45 | 15841100 | Կակաո Ջալան Տանջունգ | 18,000 | 18,000 | 18,000 | 18,000 | 18,000 | 18,000 | 18,000 | 18,000 | 18,000 | 18,000 | 18,000 | 18,000 | 18,000 |
| 46 | 15332410 | Չիր Էդգար-Վադ | 154,400 | 154,400 | 154,400 | 154,400 | 154,400 | 154,400 | 154,400 | 154,400 | 154,400 | 154,400 | 154,400 | 154,400 | 154,400 |
| 48 | 03221126 | Հազար Գյումրեթրը | 111,000 | 111,000 | 111,000 | 111,000 | 111,000 | 111,000 | 111,000 | 111,000 | 111,000 | 111,000 | 111,000 | 111,000 | 111,000 |
| 49 | 03221124 | Վարունգ Գյումրեթրը | 52,650 | 52,650 | 52,650 | 52,650 | 52,650 | 52,650 | 52,650 | 52,650 | 52,650 | 52,650 | 52,650 | 52,650 | 52,650 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 51 | 15872600 | կերակրի սոդա ,,ԿարիՏար ' ' | 2,500 | 2,500 | 2,500 | 2,500 | 2,500 | 2,500 | 2,500 | 2,500 | 2,500 | 2,500 | 2,500 | 2,500 | 2,500 |
| 54 | 15871256 | պղպեղ՝ կանաչ Գյումրեթրք | 30,940 | 30,940 | 30,940 | 30,940 | 30,940 | 30,940 | 30,940 | 30,940 | 30,940 | 30,940 | 30,940 | 30,940 | 30,940 |
| 55 | 15831500 | շաքարի արտադրության մնացորդներ՝Շաքարի փոշի Ագգա Լոգիստիկս | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 | 2,000 |
| 56 | 03221115 | կանաչ լոբի Գյումրեթրք | 72,500 | 72,500 | 72,500 | 72,500 | 72,500 | 72,500 | 72,500 | 72,500 | 72,500 | 72,500 | 72,500 | 72,500 | 72,500 |
| 58 | 03221122 | Դդմիկներ Գյումրեթրք | 6,200 | 6,200 | 6,200 | 6,200 | 6,200 | 6,200 | 6,200 | 6,200 | 6,200 | 6,200 | 6,200 | 6,200 | 6,200 |
| 59 | 03222113 | Չամիչ Գյումրեթրք | 48,125 | 48,125 | 48,125 | 48,125 | 48,125 | 48,125 | 48,125 | 48,125 | 48,125 | 48,125 | 48,125 | 48,125 | 48,125 |
| 60 | 03222129 | Տանձ Գյումրեթրք | 66,500 | 66,500 | 66,500 | 66,500 | 66,500 | 66,500 | 66,500 | 66,500 | 66,500 | 66,500 | 66,500 | 66,500 | 66,500 |
| 61 | 03222134 | Սալոր Գյումրեթրք | 56,000 | 56,000 | 56,000 | 56,000 | 56,000 | 56,000 | 56,000 | 56,000 | 56,000 | 56,000 | 56,000 | 56,000 | 56,000 |
| 66 | 03222132 | Դեղձ Գյումրեթրք | 49,980 | 49,980 | 49,980 | 49,980 | 49,980 | 49,980 | 49,980 | 49,980 | 49,980 | 49,980 | 49,980 | 49,980 | 49,980 |
| 67 | 03222118 | Կիտրոն Գյումրեթրք | 83,200 | 83,200 | 83,200 | 83,200 | 83,200 | 83,200 | 83,200 | 83,200 | 83,200 | 83,200 | 83,200 | 83,200 | 83,200 |

**ԳՆՈՐԴ**

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամ

Հասցեն՝ ք. Երևան, Տերյան 105

Բանկը՝ «Այ Դի բանկ» ՓԲԸ

Հ/Հ 11800109943100

ՀՎՀՀ 01504054

Ռեկտոր--------------------- Ռ.Մարուխյան

(ստորագրություն) Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

**ՖՈՏՈՆ ՍՊԸ**

Հասցեն՝ Ք. Երևան,Ռոստոմի 58,

Բանկը՝ <<ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ>> ՓԲԸ

Հ/Հ 16044050085000

ՀՎՀՀ 90036001

Տնօրեն --------------------- Ն. Պետրոսյան

(ստորագրություն) Կ.Տ

Հավելված N 3
«21» հունվար 2020թ. կնքված
N ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/2-2 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

_______________________________

_______________________________

գտնվելու վայրը _____________

հհ _______________________

հվհհ _____________________

Պատվիրատու

_______________________________

_______________________________

գտնվելու վայրը _______________

հհ_________________________

հվհհ________________________

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_______________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

_______________________________
ստորագրություն

_______________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

_______________________________
ստորագրություն

_______________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

*Հավելված 3.1*
*« 21 » հունվար 2020թ. կնքված*
*N ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-20/2-2 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N ______
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ________________-ի (այսուհետ՝ Գնորդ) և ________________
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ________________ -ին կնքված N ________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ________________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

________________
ազգանուն, անուն

________________
Ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

________________
ազգանուն, անուն

________________
ստորագրություն